ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. N ----- -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 34-35-րդ, 42-րդ և 67-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 18,900,000 (տասնութ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 18,900,000 (տասնութ միլիոն ինը հարյուր հազար) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 1,890 (մեկ հազար ութ հարյուր իննսուն) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 27,060,000 (քսանյոթ միլիոն վաթսուն հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 2,706 (երկու հազար յոթ հարյուր վեց) հատ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված

Կազմված է ----------2026թ.
և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Երևան քաղաքի ավագանու
« » 2026թ.
N -Ա որոշմամբ

ՀՀ Երևանի քաղաքապետ՝

_____ Տ. ԱՎԻՆՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ 25.01.2002թ.,
գրանցման N 222.120.00027

վկայական N03 Ա 053015

ՀՎՀՀ 01806173

21.05.2010թ. գրանցված կանոնադրության
թիվ ____.___ փոփոխությունը գրանցված է
ՀՀ արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

_____

“____”_____ 2026թ.

«ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

2026թ.

Ընկերության կանոնադրության 4.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 27,060,000 (քսանյոթ միլիոն վաթսուն հազար) դրամ, որը կազմում է 2,706 (երկու հազար յոթ հարյուր վեց) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10,000 (տասը հազար) դրամ:

Բոլոր 2,706 բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ 21.05.2010թ. պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով, այն է՝ Երևանի ենթակայության կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատում է Երևանի ավագանին:

Երևանի քաղաքի ավագանու՝ 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ.268-Ն և Երևանի քաղաքապետի՝ 2025 թվականի հունվարի 14-ի հ.103-Ա որոշումներով, ռենտգեն ախտորոշման համակարգ ձեռք բերելու նպատակով՝ հաստատվել է Երևան քաղաքի 2025թ. բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվելիք գումարի չափը՝ 18,900,000 ՀՀ դրամ, ինչն էլ ամբողջությամբ՝ որպես կանոնադրական կապիտալի ներդրում, հատկացվել է ընկերությանը:

Նշված գումարի սահմաններում տեղաբաշխվել է լրացուցիչ 1,890 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, ինչի արդյունքում կանոնադրական կապիտալն ավելանում է 18,900,000 ՀՀ դրամով:

Հատկացված գումարի չափով կանոնադրական կապիտալի ավելացումը բխում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 42-րդ հոդվածի պահանջներից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ